ները համարձակ մտնում են մարդկանց տները եւ մօր գրկից յափշտակում են երեխային...

Յիշեալ դժբախտութիւններից յետոյ վրայ են հասնում բնութեան սասանութիւնները: 1641 թոին պատահում է Ատրպատականի մեծ երկրաշարժը: Թաւրիզը, այդ մեծափարթամ քաղաքը, իր փառաւոր շինուածքներով ծածկւում է աւերակների կոյտի ներքոյ: Կործանւում է պարսից արքաների հրաշալի պալատը՝ Շամկազանը:

Ատրպատականի երկրաշարժից ուղիղ հինգ տարի յետոյ (1646 թ.) պատահում է Վասպուրականի մեծ երկրաշարժը, որ տեւում է եօթ օր: Լեռներն անգամ կործանւում են նրա սոսկալի հարուածներից: Հոգոոց վանքի մօտ Աբեղներ կոչուած սարը փուլ է գալիս, լցնում է ահագին ձորը եւ խափանում է նոյն ձորի միջով անցնող գետի ընթացքը: Վան քաղաքը իսպառ աւերակ է դառնում, տապալւում են եւ Շամիրամի բերդի հզօր աշտարակները: Վանայ մէջ եւ նրա շրջակայքում, կա՛մ բոլորովին կա՛մ կիսով չափ, կործանւում են հետեւեալ վանքերն ու եկեղեցիները. Վերին Վարագը, Ներքին Վարագը, Թոդիկ ճգնաւորի եկեղեցին, Սալնապատի վանքը, Շուշանից վանքը, Ղուռուբաշի վանքը, Հոգոոց վանքը, Էրեմիրայ վանքը, Սրխու վանքը, Բերդակու վանքը, Կենդանանից վանքը, Կռնկու վանքը, Անգուսներու վանքը, Ալերու վանքը, Արշական վանքը, եւ Վան քաղաքի մէջ գտնուած Ս. Խաչ, Ս. Աստուածածին, Ս. Սիոն, Ս. Նշան եկեղեցիները:

Բնութեան սասանմունքները մի կողմից, բռնակալների գազանութիւնը միւս կողքից, եւ աւելանալով դրանց վրայ սովը, ժանտախտը, այդ բոլոր աղէտաւոր թշուառութիւնները, որոնց դէմ մաքառելու անզօր է գտնւում մարդը, բնականապէս ձգում են նրան յուսահատ եւ շարեալ դրութեան մէջ: Կեանքը եւ աշխարհը դառնում է նրա համար ցաւերի եւ դառնութեան մի ծով, եւ այդ ցաւերից ազատելու համար նա ձգում է իրան աստծու գիրկը եւ հանգստութիւն որոնում հետ գերեզմանեան խաղաղութեան մէջ: Նա մտածում է, թէ աշխարհի վերջը հասել է, եւ շտապում է թողնել նրան: Այստեղից ծագում է խորին անձնուրացութեան զգացմունքը եւ հակումն դէպի անապատ, դէպի ամայութիւն:

Եւ իրաւ, միեւնոյն տառապանքների ընթացքում, երբ թշնամին, սովը, ժանտախտը, երկրաշարժը միացած, աւերակ էին դարձնում երկիրը, հէնց այդ ժամանակ զանազան տեղերում կառուցւում էին մեծ թոով անապատներ եւ լցւում էին բազմաթիւ աշխարհից հրաժարուած աբեղաներով:

Իսկ եւ իսկ այն ժամանակ, երբ պարսիկներից եւ օսմանցիներից աւերակ դարձած Հայաստանի խրճիթները դեռ մխում էին կրակի մէջ, եւ երբ